14 ապրիլի 2011 թվականի N 379 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 1843-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հոկտեմբերի 29-ի <<Գազի տնտեսությունում տարրերի տեխնիկական շահագործման կանոններ և աշխատանքի անվտանգության պահանջներ>> տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N 1843-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) II բաժնի 2-րդ գլխում ՝

ա. 3-րդ կետի <<բ>> ենթակետի հինգերորդ պարբերությունում <<գործիքների>> բառը փոխարինել <<սարքերի>> բառով,

բ. <<է>> ենթակետում <<ամենամեծ>> բառը փոխարինել <<առավելագույն>> բառով, <<ամենացածր>> բառը՝ <<նվազագույն>> բառով, իսկ <<գազաբաշխիչ կետերի (ԳԲԿ)>> բառերը՝ <<գազակարգավորիչ կետերի (ԳԿԿ)>> բառերով,

գ. 3.1-ին կետի 6-րդ ենթակետում <<խզման>> բառը փոխարինել <<ընդհատման>> բառով.

2) 3-րդ գլխի 4-րդ կետի <<գ>> ենթակետում <<ՄԹ (միջին թեթևության)>> բառերը փոխարինել <<ՑԹ (ցածր թեթևության)>> բառերով.

3) 5-րդ գլխում՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԶԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ>>,

բ. <<ա>> և <<դ>> ենթակետերը <<Բնակելի շենքերի>> բառերից հետո լրացնել <<բազմաբնակարան շենքերում գտնվող>> բառերով,

գ. <<բ>> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<< բ) գազի համակարգի շահագործումը նախատեսում է պարբերական տեխնիկական սպասարկում, սեզոնային տեխնիկական սպասարկում (սեզոնային աշխատող սարքավորումների միացում և անջատում), արտածրագրային սպասարկում (նորոգում ըստ հայտերի)>>,

դ. <<ե>> ենթակետում <<Պարբերական ստուգման և մաքրման ենթակա են՝>> բառերը փոխարինել <<Ստուգման և մաքրման աշխատանքները կատարվում են հետևյալ պարբերականությամբ՝>>,

ե. <<զ>> ենթակետի առաջին պարբերությունը <<ստուգման>> բառից հետո լրացնել (զննման) բառով, իսկ <<մաքրման>> բառը փոխարինել <<մաքրության փաստագրման>> բառերով,

զ. <<զ>> ենթակետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Պարբերական ստուգման (զննման) ենթակա են ծխատարերի և օդատարների կառուցվածքը, նյութը և ջերմամեկուսացման ու բավարար քարշի առկայությունը: Նշված աշխատանքներն իրականացվում են սպասարկող կազմակերպության ստանդարտով սահմանված կարգով: Արդյունքները ձևակերպվում են կազմակերպության ստանդարտով սահմանված ակտով:>>,

է. <<է>> ենթակետում <<բնակշահագործման կազմակերպության>> բառերը փոխարինել <<սեփականատիրոջ>> բառով.

4) 6-րդ գլխում՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՈՉ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԶԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ>>,

բ. <<ա>> ենթակետում <<Արդյունաբերական, գյուղատնտեսական և արտադրական>> բառերը փոխարինել <<Արդյունաբերական, գյուղատնտեսական, բնակչության կենցաղային սպասարկման արտադրական և ոչ արտադրական, >> բառերով,

գ. <<գ>> ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Արդյունաբերական, գյուղատնտեսական, բնակչության կենցաղային սպասարկման արտադրական և ոչ արտադրական կազմակերպությունների գազատարների, ծխաօդատար ուղիների և ԳԿԿ (ԳԿՏ) շահագործումը պետք է համապատասխանի սույն ՏԿ-ի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի <<Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում>> տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին>> N 2399-Ն որոշման պահանջներին>>,

դ. <<ժ>> ենթակետի առաջին պարբերության վերջը <<դեպքում>> բառից հետո լրացնել <<, որի ժամանակ ստուգվում է կեղտոտվածության բացակայությունը, դրանց կիպությունը և առանձնվածությունը ծխադրման միջոցով, ինչպես նաև բավարար քարշի ապահովումը>> բառերով.

5) 9-րդ գլխում՝

ա. վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<ԳԱԶԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՉԱՓԻՉ-ՀՍԿԻՉ ՍԱՐՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ>>,

բ. 12-րդ կետի վերնագրում <<Տեղափոխվող (տանովի)>> բառերը փոխարինել <<Շարժական (տեղափոխվող)>> բառերով,

գ. 12-րդ կետի <<ա>> ենթակետում <<տանովի>> բառը փոխարինել <<տեղափոխվող>> բառով.

6) III բաժնի 10-րդ գլխի՝

ա. <<զ>> ենթակետի երկրորդ պարբերությունում <<տրվող անհատական պաշտպանիչ>> բառերը փոխարինել <<հատկացվող անհատական պաշտպանության>> բառերով,

բ. <<զ>> ենթակետի չորրորդ պարբերությունում <<պիտանիության>> բառը փոխարինել <<պիտանելիությունը>> բառով,

գ. 15-րդ կետի <<բ>> ենթակետի երկրորդ պարբերությունից հանել <<բնակելի շենքեր>> բառերը,

դ. 15-րդ կետի <<գ>> ենթակետում <<Անվտանգության տեխնիկան գազի տնտեսությունում>> բառերը փոխարինել <<Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում>> բառերով,

ե. 16-րդ կետի <<ժգ>> ենթակետում <<պիտանիության>> բառը փոխարինել <<պիտանելիության>> բառով.

զ. 12-րդ գլխի <<ը>> ենթակետի երրորդ պարբերությունը <<պատրաստման>> բառից հետո լրացնել <<տեղերում ու>> բառերով.

7) տեխնիկական կանոնակարգի N 1 հավելվածի 3-րդ կետի վերնագրում, ինչպես նաև <<դ>> և <<ը>> ենթակետերում <<տեղափակում>> բառը փոխարինել <<տեղայնացում>> բառով:

2. Տեխնիկական կանոնակարգի N 3 հավելվածում՝

1) N 2 ձևի անվանման մեջ <<ԳԿԿ-ի գտնվելու հասցեն _____ N _____>> տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

<<(Պահպանման ժամկետը 3 տարի) >> .

2) N 3 հավելվածը N 2 ձևից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ N 2ա ձևով.

<<Ձև N 2ա

Մ Ա Տ Յ Ա Ն

ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԳԿԿ-ի գտնվելու վայրը _____N_____

(Պահպանման ժամկետը 3 տարի)

Ամիսը, ամսաթիվը, տարեթիվը	Ժամը	Գազի ճնշումը		Ջտիչի ճնշումը			Տեխնիկա-կան սպասարկ-ման արդյունք-ները	Սպասարկվող փականագործի ազգանունը, անունը, հայրանունը, ստորագրու-թյունը	Վերահսկողի ազգանունը, անունը, հայրանունը, ստորագրու-թյունը
		մուտքի կգ/սմ^3	ելքի մմ.ջ.ս.	մուտքի կգ/սմ^3	ելքի կգ/սմ^3	ճնշման անկումը			
1	2	3	4	5	6	7	8	9	10

>>.

3) N 4 ձևը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<Ձև N 4

Ջ Ե Կ Ո Ւ Յ Ց

ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՇՐՋԱԳԱՅՈՂԻ

------- ----------20 թ.

_____ երթուղու գտնվելու վայրը _____

(շրջագայողի անունը, ազգանունը) (գյուղը, բնակավայրը, փողոցը)

NN	Գազատարի գտնվելու վայրը	Գազի առկայությունը (նկուղում, դիտահորում և այլն)	Գազատարի վրա հայտնա-բերված թերությունների	Ձեռնարկված միջոցառումները

ը/կ	(գյուղը, բնակավայրը, փողոցը և այլն)		բնութագիրը	
1	2	3	4	5

>>.

4) N 5 ձևի անվանման մեջ <<ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ>> բառը փոխարինել <<ԶԵԿՈՒՅՑ>> բառով.

5) N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր` N N 6 և 7 ձևերով.

<<Ձև N 6

ԳԱԶԱՏԱՐՆԵՐԻ ՇՐՋԱԳԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ -------------թ.

NN ը/կ	Երթուղու համարը	Երթուղու գտնվելու վայրը	Շրջիկ փականագործի անունը, ազգանունը	Գազատարի տվյալները								Մ/գ գազատարներից 15մ հեռավորության վրա գտնվող					ԷՈՒԿ	Փակող արմատուրաներ
				վերգետնյա				ստորգետնյա				դիտահորեր				նկուղներ		
				մ/ճ		գ/ճ		մ/ճ		գ/ճ		գազի	ջրի կոյուղու	կապի	էլ			
				D/մմ	L/գծմ	D/մմ	L/գծմ	D/մմ	L/գծմ	D/մմ	L/գծմ	հատ	հատ	հատ	հատ	հատ		

Ամիսներ																														
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**	**16**	**17**	**18**	**19**	**20**	**21**	**22**	**23**	**24**	**25**	**26**	**27**	**28**	**29**	**30**	**31**

Ձև N 7

Մ Ա Տ Յ Ա Ն

ԳԱԶԱՏԱՐ ՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ԳԿԿ-Ի (ՊԳԿԿ) ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ

NN ը/կ	Շրջագայման գտնվելու վայրը (գազատարի երթուղին և ԳԿԿ-ի (ՊԳԳԿ) համարը)	Շրջագայող փականագործի անունը, ազգանունը	Ջեկույցի համարը և ամսաթիվը	Հայտնաբերված թերությունները	Ընդունող վարպետի ստորագրությունը	Թերությունների վերացման համար ձեռնարկված միջոցները	Պատասխանատու անձի անունը, ազգանունը, ստորագրությունը	Ծանոթագրություն
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**

>>:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից վեց ամիս հետո: